

Նորա երգնկյան
ԵՊԴ հայ բանասիրության ֆակուլտետ, 2-րդ կուրս
Գիտ. դեկ. ք. գ. դ., պրոֆ. Ս. Մուրադյան
Էլ. փոստ՝ verznkyann@gmail.com

ԱՐԴԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ. ՀԱՄԱՑԱՆՑ (Վերլուծական ակնարկ)

Երբ հետադարձ հայացք ենք նետում գրականության զարգացման պատմության վրա առհասարակ, ապա ակնհայտորեն ակնառու է դառնում գրականության հսկայական ներուժը ընդհուպ մինչև վարչաքաղաքական օղակներ:

Նախ կլասիցիզմի ձևավորման ու կայացման վաղ շրջանում, երբ ոչ միայն կարևորվում էր գրականության դերը, այլ համարվում էր առաջնահերթություն՝ արվեստի մի քանի ճյուղերի հետ միասին: Գրականությունը միշտ համակված է եղել քաղաքացիական պաթոսով: Այդ իսկ պատճառով այն օգտագործեցին, թե միապետության ծագման ու կայունացման ժամանակաշրջանում, և թե լուսավորությունը միապետության ճգնաժամի տարիներին՝ դասային միապետական կարգերը ճնշելու և կործանելու նպատակով:

Ինչպես հայտնի է, ոչ մի իշխանություն և ոչ մի կառավարություն պատմության մեջ չէր կառուցում իր իշխանությունը սոսկ հարկադրամբի միջոցով: Նրանք միշտ կարիք էին զգում իշխանության գաղափարական ամրապնդման և ձգտում էին ամրապնդել իրենց գաղափարական այնպիսի գրականության մեջ: Այդպիսի փոխզիջումային տարբերակի ստեղծման անհրաժեշտությունից չխուսափեց և Ֆրանսիայի առաջին պետական մինիստր կարդինալ Ռիշըլյոն: Այսինքն գրականությունն ու արվեստը ոչ վաղնջական ժամանակներում հսկայական ու անհերքելի լծակներ էին պետության ձեռքում: Այս առիթով Պուլկինը գրել է. «Ռիշըլյոն զգում էր գրականության կարևորությունը: Այդ մեծ մարդը, որ Ֆրանսիայում նսեմացրել էր Ֆեոդալիզմը, գրականությունը ևս ցանկացավ կաշկանդել: Գրողները (Ֆրանսիայում խեղճ, ծիծաղելի և հանդուգն մի դասակարգ) արքունիք կանչվեցին և արժանացան թոշակների ինչպես ազնվականները»:

Նշանակում է, որ թեպետ գրականությունը անկասելիորեն պահվում էր պետության անմիջական հսկողության ներքո. այնուամենայնիվ այն անպատմելի մեծ դեր ուներ: Ռիշըլյոն զգալով այդ դերը հետևում էր գրականության զարգացմանը և խոչընդոտում դրա տարածմանը ժողովրդի մեջ: Վերջինիս կարծիքով դա նման էր նրան «թե ինչպիսի իրեշային կլիներ մարմինը, եթե ունենար աչքեր մարմնի տարբեր մասերի վրա, այդպես էլ իրեշավոր կլիներ պետությունը, եթե իր բոլոր հպատակները լինեին կրթված»: Այս արտահայտությունը խիստ խորհրդանշական է հորհրդային միության որդեգրած քաղաքականությանը:

Խորհրդային միությունը կրթում էր, սակայն մեծ սահմանափակումներով և անազատ մթնոլորտում՝ հաճախ աղճատելով գրական ստեղծագործության բուն ասելիքը: Հրատարակվելու ենթակա տեքստերը պատշաճ հսկողության էին ենթարկվում քաղաքական հիմնարկների միջնորդությամբ, դրանք քննվում էին բառ առ բառ և բոլոր այն ստեղծագործությունները, որոնք ըստ խորհրդային իշխանությունների չափանիշների աննպատակահարմար մեկ բառ, արտահայտություն կամ նախադասություն էին ընդգրկում, ոչ միայն զրկվում էին հրատարակվելու իրավունքից, այլև օգտագործվում էին հենց գրողի դեմ: Կլասիցիստական գրականության շրջանում բռնաճնշումների ենթարկված գրականությունը զուգահեռելիս խորհրդայինի հետ՝ անթաքույց է դառնում գրականության անհերքելի մեծությունը և

քաղաքական նշանակությունը, որի ահագնացող ընդլայնումը նույնիսկ վախ ու զգուշավորություն է ներշնչել իշխանական օղակների ներկայացուցիչներին: Այսինքն գրականությունը դեկավարող լծակները միանգամայն անվրեպ թելադրողի դերում էին և կարող էին իրենց քաղաքական նկրտումներին տուրք տալով նենգափոխել գրական հանճարեղ ստեղծագործություններ և տնօրինել դրանց ճակատագրերը: Այսպիսով գրականության զարգացման վրա անջնջելի հետք թողեց խորհրդային իշխանապետությունը: Այսպես հսկայական խնդրի առջև կանգնեցին հայազգի մեծահամճար պոետների երկնած անգնահատելի ստեղծագործությունները: Քանի որ պոետը չէր կարող իր գրչին ազատություն ընծայել, իսկ այդ ազատությունը անհրավաճցիորեն առիթ կհանդիսանար մեղադրվել պաշտոնական գղափարախոսությանը խորթ և հակընդդեմ ստեղծագործություններ գրելու մեջ: Ինչպես ժամանակին Սևակի «Եղիցի լույսը», Չարենցի «Գիրք ճանապարհին» կամ Շիրազի պոեմները, որոնցից կան այնպիսիք, որ ցայժմ չեն թոթափել խորհրդային Միության ծանր արգելքը և դեռ լույս չեն ընծայվել: Իսկ Չարենցի «Պատգամին» թերևս իրագել են շատերը, երբ նա իր հորդորն ուղղեց հայ ժողովրդին՝ ի փառս բարօրացման, սակայն ժամանակին հասկանալի պատճառներով հանդիպեց մեծ դիմադրության իշխանական կարգերի կողմից:

Այս ամենը փաստում է գրականության տարածման համար ժամանակին առկա փակուղիների մասին: Այդ սահմանափակումներն այսօր բացակայում են: Եվ դրա հիմնական «մեղավորը» համացանցն է, որը ինչ-որ չափով արժեզրկել ու պարզունակ է դարձրել գրականություն կոչվող արժեքը: Գրականությունը պատմեցելու միտումը մի ժամանակ այնքան հսկայական է եղել, որ օրինակ ազատ գրող Թեոֆիլ դե Վիոն մեղադրվել է աթեիզմի մեջ և դատապարտվել խարույկի վրա այրվելու, իսկ երբ օրինակ Պիեռ Կոռնեյլը գրեց ֆրանսիական դրամատուրգիայի զագաթներից մեկը համարվող «Սիդ» ողբերգությունը, դատապարտվեց, քանզի այս կլասիցիստական ստեղծագործությունը բնավ չէր համապատասխանում Ռիշըլյոնի առաջադրած պահանջներին, այս պահանջներն ի դեպ գաղափարական ոլորտում էին, սա ևս վկայում է գրականությանը հատկացված հսկայական դերի և միևնույն ժամանակ գրականության քաղաքականացված լինելու մասին:

Իսկ այսօր՝ Իհարկե, ոչ ոք չի խնդրում խարույկի վրա այրելու դատապարտել իրենք իրենց գրողի բարձր անուն վերագրողներին, ովքեր հայտնի են դառնում համացանցում իրենց, այսպես կոչված, ստեղծագործությունները հասարակության լայն մասշտաբներին հմտորեն հասանելի դարձնելու միջոցով միայն: Իսկ միթե դա չի արժեզրկում գիրն ու գրականությունը: Ժամանակին գրքի դերն այնքան ահռելի էր, որ գրքի հանդեպ տածած հարգն ու մեծարանքը ակներև էին: Պարզ օրինակ, երբ դպրոցական Սևակը իրենց գյուղի գրադարանի բոլոր գրադարակների գրքերը սերտելուց հետո, մակական գողության է դիմում հարևան գյուղի գրադարանից գրքեր վերցնելով՝ գրականության հանդեպ իր անհագուրդ ծարավը հագեցնելու և ընթերցասիրության մեծ պահանջը բավարարելու միտումով:

Իսկ այսօր ոչ մի դժվարություն չի ներկայացնում համացանցի միջոցով գրական ստեղծագործություն ձեռք բերելը: Մի կողմից, իհարկե, լավ է ու արդյունավետ այս հասանելիությունը, իսկ մյուս կողմից գիրք կոչվածը մնում է ստվերում: Սա այլ բան է և ավելի շուտ նախապատվության խնդիր է՝ ընթերցել համացանցում, թե էլ էկտրոնային տարբերակով և, ինչ խոսք, այս դեպքում գրքերի էլեկտրոնային տարբերակները հասանելի կլինեն նաև օտարերկրյա բուհերում հայ ուսանողներին կամ գիտնականներին և կամ ուղղակի հետաքրքրվողներին: Բայց այլ բան է անդրադառնալ համացանցում ընդգրկված գրականության բուն էությանը և արժեքին: Կան իհարկե ժամանակակից գրականությունն ընդգրկող հետաքրքիր էլեկտրոնային կայքեր կամ հեղինակային կայքեր, որոնցից պետք է առանձնացնել «Գրանիշը», կամ վերջին ժամանակներում լայն տարածում գտած «Լիտոպեդիա» առցանց գրադարանը: «Գրանիշում» ժամանակակից հայ գրական ստեղծագործությունները

միանգամայն համակարգված են կառուցվածքային ու բովանդակային տեսանկյուններից, ինչպես նաև դյուրին է օգտագործման համար: Իսկ կայքի բովանդակած գրական տեքստերը զանազանեւն արդեն ընթերցողի ճաշակի հարցն է: Մինչդեռ այժմ համացանցում լավ տարածում գտած բլոգներից շատերը իրենց գործունեությանը միանգամայն այլ նյութ են մատակարարում՝ արդի հայ գրականություն անվան ներքո: Եվ, իհարկե, ոչ ոք չի սահմանափակում այս պոետների շատ արագ տարածվող բանաստեղծությունների հանգավոր կամ անհանգ գրելը, մեծատառ ու փոքրատառ հարգելը, կետադրական նշանների մասին հիշելը կամ է օժանդակ բայը չանտեսելը, իսկ բովանդակության վերաբերյալ ոչ ոք իրավասու չէ սահմանափակումներ մտցնել: Բայց չէ որ կա անհրաժեշտություն զոնե ինչ-ինչ հսկողություններ սահմանել: Համարենք, որ մարդիկ նորարար են, բայց դա դեռ չի նշանակում, որ գրականության քողի ներքո պետք է ներկայացվեն իրենց փրոդական ոճի ոտանավորները, որոնք դեռ զարգացման հսկայական ուղի ունեն անցնելու՝ բանաստեղծություն դառնալու համար: Իսկ առանց այդ ենթադրելի հսկողության համացանցը շուտով կդառնա իրենց նեղ շրջապատում «պոետ» հորջորջվածների մենաշնորհը:

Нора Ерзнкян

**ПУТИ РАСПРОСТРАНЕНИЯ СОВРЕМЕННОЙ
АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЫ;
ИНТЕРНЕТ**

В статье в первую очередь представлены пути распространения армянской литературы в советский период. Используя некоторые примеры, представляется то обстоятельство, что в этот период известные армянские писатели урезали часть своих бесценных произведений только потому что произведения подвергались жесткой цензуре со стороны государственных структур. И для того, чтобы довести до читателя истинный смысл произведений и, одновременно, избавить их от цензуры, авторы были вынуждены использовать метод подтекста в своих работах.

А сегодня по "вине" интернета некоторые так называемые писатели под тенью литературы представляют свои любительские стихи, которые должны пройти длинный путь, чтобы превратиться в истинные произведения.

Nora Yerznkyan

**WAYS OF SPREADING CONTEMPORARY ARMENIAN LITERATURE;
THE INTERNET**

First of all, the article gives information about ways of spreading Armenian literature during the Soviet regime. Examples are brought to present the fact that during that period, famous Armenian authors had to cut parts of their works that had unique value just because their works were thoroughly studied by government officials. In order to make the real meaning of their significant works available to the reader and also to keep them away from being censored, the authors started to use the method of subtext. Nowadays, it's due to the Internet some pseudo-writers under the canopy of literature present their amateur "poems" that have a long way to go to become a real peace of art.